

ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

ԵՐ

ՌԻՍԼԵՐ ԱՒԱԳ

II

Մերկացումներ:

—Օ՞չ, պարոն Սիդիզմունդը... Հըօ, ինչպէս էք, քեսի
Սիդիզմունդ, ի՞նչպէս են ձեր գործերը... Լաւ են:

Ծերունի գանձապահը բարեհոգի կերպարանքով ժպտում
էք, սղմելով գործարանատիրոջ և նրա կնոջ ու եղբօր ձեռո-
քը և, խօսելով հանդերձ, հետաքրքրութեամբ դիտում էք իր
շուրջը: Սէնտ-Անտուանումն էք այդ, Պրօշասօնների որմաթղթի
գործարանում, որի մրցութիւնը արդէն վտանգաւոր էք դառ-
նում: Ֆրօմօնների առևտրատան այդ նախկին գործակատարնե-
ոը շատ փոքր չափսերով էին սկսել գործը և հետզհետէ կարո-
ղացել էին իրանց համար դիրք ստեղծել վաճառանոցում:
Ժօրժի հօրեղբայրը երկար ժամանակ օդնել էք նրանց իր
վարկով, իր փողով, դրա չնորհիւ բարեկամական յարաբերու-
թիւններ էին հաստատուել այդ երկու առևտրատների մէջ և
մի հաշիւ էք մնացել —տասը, տասնհինգ հազար ֆրանկի, —որ
վերջնականապէս չէին մաքրել ֆրօմօնները, իմանալով, որ փո-
ղը ապահով տեղ է:

Գործարանը արդարե հիմնաւոր տեսք ունէք: Ծխնելոյզ-
ները հպարտ-հպարտ թափ էին տալիս իրանց շոգիէ բաշերը:
Աշխատութեան խուլ աղմուկից երևում էք, որ արհեստանոց-
ները լիքն են ու եռուն: Շինութիւնները լաւ էին սարքուած,
ապակիները ջինջ էին, առհասարակ ամեն ինչ աշխոյժ,
զուարթ ու կարգապահ տեսք ունէք, և գանձարանի ցանցապա-

տի յետեռում եղբայրներից մէկի կինը, պարզ հագնուած, հարթ սանրած մազերով, երիտասարդ դէմքի հեղինակաւոր արտայայտութեամբ, նստած ուշի ուշով հաշուում էր թուանշանների մի երկար շարք:

Սրտի խորքումը դառնութեամբ էր մտածում ծերունի Սիգիզմունդը այն տարբերութեան մասին, որ կար, մի կողմից, Թրօմօնների՝ երեխն այնքան փարթամ, իսկ այժմ միմիայն իր նախկին հոչակով դոյութիւն շարունակող առետրատան և, միւս կողմից, իր առջեր եղած հիմնարկութեան յարածուն բարգաւաճման մէջ: Նրա խուզարկու հայեացքը տնտղում էր այդ հիմնարկութեան ամենամանը խորչերը, փնտոելով մի պակասութիւն, քննազատելու մի էտա, և որովհետեւ ոչինչ չէր կարողանում գտնել, սիրտը ձմլում էր և ժպիաը կեղծութեան ու շփոթմունքի արտայալուութիւն էր ստանում:

Նրան ամենից շատ գժուարացնողը այն էր, թէ ինչ ձեռվ ուզէր իր պատրօններին հասնելիք փողը, որ Պրօշասօնները չընկատէին նրանց դրամարկղի նեղ դրութրւնը: Խեղճ ալեորը աշխատում էր պատ ու անհոգ կերպարանք ընդունել, բայց մարդու մեղքը գալիս էր վրան նայելիս... Իրանց գործերը լաւ էին գնում... շատ լաւ... Պատահմամբ անցնելիս էր եղել այդ կողմերով և մտել էր նրանց մօտ... Դրանից էլ բնական ինչ կարող է լինել: Մարդ կարուտում է հինաւուրց բարեկամներին:

Բայց այդ յառաջաբանները, այդ հետզհետէ աւելի ու աւելի մանուածապատ խօսքերը չէին մօտեցնում նրան ուզած հարցին, այլ, ընդհակառակը, հեռացնում էին հարցից, իսկ յետոյ, երբ նրան թուաց, թէ զարմանքի արտայայտութիւն է երևում իր ունկնդիրների աչքում, նա բոլորովին շշկուեց, սկսեց կմկմալ, զլուխը կորցրեց և, իբրև փրկութեան վերջին միջոց, զլիարկը վերցրեց ու այնպէս ցոյց տուեց, թէ գնում է: Երբ հասաւ դռանը, յանկարծ մտաբերեց.

—Հա, լաւ միտքս ընկաւ, քանի որ եկել եմ...

Եւ նա աչքով արեց, կարծելով, թէ շատ խորամանկ արտայայտութիւն է տալիս դէմքին, մինչդեռ իսկապէս խղճալի կերպարանք ստացաւ:

—Քանի որ եկել եմ, լաւ չէր լինի, որ մի քիչ մաքրէինք մեր հին հաշիները:

Երկու եղբայրները և հաշուեսեղանի յետեր նստած ջահէլ կինը մի վայրկեան իրար երեսի նայեցին, չը հասկանալով նրա ասածը.

—Հաշիները, ի՞նչ հաշիներ:

Յետոյ երեքն էլ միաժամանակ սկսեցին ծիծաղել ի բոլոր

սրտէն կարծեն թէ ծերունի գանձապետը սաստիկ թունդ կատակ արած լինէր: Ինչու ասիս չի ասի այդ քեռի Պլանիւմը... Եւ խեղճ Պլանիւմը ինքն էլ ծիծաղում էր հեաները: Ծիծաղում էր, առանց ծիծաղը գալու, այլ միայն նրանց պէս արած լինելու համար:

Վերշապէս բացատրուեց հարցը: Ինքը Ֆրօմօն կրտսերը, վեց ամիս առաջ, եկել էր վերցրել նրանց մօտ մնացած փողը:

Սիզիզմունդը զգաց, որ ծնկները ծալւում են: Սակայն նա քաջութիւն ունեցաւ ասելու.

—Ախ, ճիշտ որ, բոլորովին մտահան էի արել... Զէ, մոռացկոտ եմ գարձել... Երևում է, որ շատ եմ ծերացել, որդիքս...

Եւ ալեորը զարս զնաց սրբելով աչքերը, ուր զեռ փայլում էին արցունքներ մի փոքր առաջ արձակած քրքիչից, իսկ նրա յետնից Պրօշասօնները թափ էին տալիս գլուխները, նայելով իրար երեսի: Նրանք հասկացել էին:

Ստացած հարուածը, այնպէս էր շշմացրել գանձապետին, որ գուրս գտնուն պէս ստիպուած եղաւ նստել մի նստարանի վրայ: Ահա թէ ինչու Ժօրժը այլ ևս փող չէր վերցնում դրամարկից, նա ինքն էր հաւաքում իրանց հասնելիք փողերը: Ուրիշ տեղերում էլ նոյնը պէտք է լինէր, ինչ որ Պրօշասօնների մօտ Ռւրեմն բոլորովին անօգուտ էր նսթարկուել նոր ստորացումների: Այս, ճիշտ է, բայց պայմանաժամը, պայմանաժամը... Այդ միաքը ոյժ տուեց նրան: Նա սրբեց իր քրտնաթոր ճակատը և շարունակեց ճանապարհը վճռելով մի անգամ էլ բախտը փորձել, մտնելով նոյն արուարձանում դանուող իրանց պարտապաններից մէկի մօտ: Սակայն այս անգամ որոշ նախազգուշութիւններ ձեռք առաւ և ներս չը մտած, չէմքից գոռաց գանձապետին:

—Բարեն, քեռի այս ինչ... Մի բան ունեմ ձեզնից հարցնելու...

Եւ, ջղաձգաբար սղմած ձեռքով գուռը կիսաբաց պահելով, շարունակեց:

—Ե՞րբ ենք մաքրել մեր վերջին հաշիւը: Մոռացել եմ մատեանը գցել:

Օ՛, վաղուց, շատ վաղուց էին մաքրել հաշիւը: Ֆրօմօն կրտսերի ստացականը սեպտեմբերին էր գրուած: Հինգ ամիս էր անցել:

Դուռը ձեռաց փակուեց:

Այդ էլ երկու: Անշուշտ միենոյն բանն էր լինելու ամեն աեղ:

«Ա՛խ, պարոն Շօրշ, պարոն Շօրշ...» շշնջում էր իսեղծ Սիդիկիզմունդը, և մինչ նա այդպէս շարունակում էր իր շրջադաշտութիւնը, տիկին Ֆրօմօն կրտսերի կառքը անցաւ ուղղակի նրա կողքով, դիմելով գէպի Օոլէանեան կայարանը, բայց կլէրը չը տեսաւ ծերունի Պլանիւսին, ինչպէս մի քիչ առաջ տանից դուրս գալիս չէր տեսել այ. Շէքին իր երկար սիւրտուկով, ոչ էլ հոչակաւոր Դըլօբէլին իր ծալսի ցիլինդրով, պայմանաժամ մի այդ երկու այլ զոհերին, որոնք, զանազան կողմերից դալով միաժամանակ ծոեցին վիշէլզոդոդիէտ փողոցը, նպատակակէտ ունենալով գործարանը և Ռիսլէրի քսակը, Խեղճ կինը այնքան մտահոգ էր իր անելիք քայլի պատճառով, որ սիրտ չունէր փողցին նայելու:

Մտածեցէք: Ի՞նչ սարսափելի դրութիւն էր: Գնալ հարիւր հազար ֆրանկ խնդրելու Գարդինուայից, մի մարդուց, որ պարծենում էր, թէ երբէք իր կեանքումը ոչ պարտք է վերցրել, ոչ պարտք տուել, որ տեղի անտեղի պատմում էր, թէ մի անգամ միայն ստիպուած լինելով հօրից քառասուն ֆրանկ խնդրել մի կրկնավարտիք առնելու համար, նա վերադարձել էր նրան այդ քառասուն ֆրանկը փոքրիկ գումարներով: Ամենաքի, նոյն իսկ իր գերդաստանի վերաբերմամբ ծերունի Գարդինուան հետեւում էր այն կծծիութեան աւանդութիւններին, որ հողը, դաժան և յաճախ իր մշակողների նկատմամբ ապերախտ հողը կարծես պատուասաւմ՝ ի բոլոր գիւղացիներին: Ծերունու համար վճռած բան էր, որ քանի ինքը կենդանի է, իր վիթխարի կարողութիւնից մի շիւղ անգամ չի անցնելու իր գերդաստանի ձեռքը:

—Երբ որ մեռնեմ, այն ժամանակը կարող են տիրանալ իմ գոքին,—ասում էր նա յաճախ:

Այդ սկզբունքի հիման վրայ, նա մարդու էր տուել իր աղջկան, կլէրի մօրը, բոլորովին անօժիտ, թէն յետոյ չէր կարողանում ներել իր փեսային, որ նա հարստացել էր առանց իր օգնութեան: Որովհետեւ այդ՝ որքան շահասէր, նոյնքան և մնափառ բնաւորութեան առանձնայտկութիւններից մէկն էլ այն փափագն էր, որ ամենքը կարօտութիւն ունենան իրանից, խունարհուեն իր փողի առաջ: Երբ Ֆրօմօնները հրճւում էին նրա առաջ այն բանից, որ իրանց դործերը սկսում են լաւ գնալ, նրա՝ բզով ծակած սատանայ աշքերը ծիծազում էին հեզնօրչն և նա այնպիսի եղանակով էր ասում՝ «ամեն բանի վերջն է գովիլի», որ մարդ սարսուռ էր զգում, երբեմն էլ, երեկոները, Սավինիյում, այն ժամանակ, երբ պուրակը, ծառութիւնները, գլեակի տանիքի կապտագոյն հերձաքարերը, գոմանոցների

կարմրագոյն աղիւսները, իճակները և աւազանները չողջողում էին հրաշալի վերջալոյսի ճաճանչներից, այդ օտարութի նորեւուկը, աչքը չորս կողմը ման ածելուց յևաոյ, բարձրածայն տառմ էր իր որդիների ներկայութեամբ.

—Երբ մահո միաս է գալիս, միայն այն է ինձ մխիթարում, որ ոչ ոք մեր ընտանիքից այնքան հարուստ չի լինի, որպէս զի կարողանայ պահել այս դղեակը, որ տարեկան յիսուն հազար փրանկ ծախք է պահանջում:

Եւ սակայն այն ծերունական գորովի չնորհիւ, որ նոյն իսկ ամենաչոր ու ցամաք պատերն էլ գտնում են իրանց սրբի խորքում, Գարդինուան ուրախութեամբ կը փայփայէր իր թռուին: Բայց կէրը, գեռ երեխայ ժամանակից, մի անցալթելի հակակրութիւն էր զգում զէպի այդ նախկին գեղջուկի անսրբառութիւնը և պարծենկոտ եսամուռթիւնը: Իսկ երբ տարբեր դաստիարակութեամբ անջատուած մարդկանց չի կապում մէրը, հակակրութիւնը սաստկանում է հազար ու մի ձեռք: Երբ կէրը ամուսնանալու էր Ժօրժի հետ, ծերուկը ասել էր ափիին Ֆրօնմօնին.

—Եթէ աղջիկդ ուզի, արքայավայել ընծայ կը ստանայ ինձանից: բայց ոչինչ չեմ տայ առանց իր խնդրելու:

Եւ կէրը ոչինչ չէր ստացել, որովհետեւ չէր կամեցել խնդրել:

Որքան ծանր էր այժմ գնալ՝ աղաչելով հարիւր հազար փրանկ ուզել այն մարդուց, որի առատաձեռնութիւնը այդպէս արհամարհել էր նա երեք տարի առաջ, գնալ ստորանալ, լսել անվերջ քարոզներ, տիսմար ծաղրանքներ, համեմուած գոեհիկ կատակներով և գեղջկային դարձուածքներով, կարծ, բայց տրամաբանական մտքերի հնարած այդ ընդհանրապէս ծիշտ ասացուածքներով, որոնք իրանց ուսմիկ ոճով վիրաւորում են՝ իրը ստորադաս մարդու նախատիւք:

Խեղճ կէր: Յանձին նրա ստորանալու էին իր ամուսինը և իր հայրը: Պէտք էր խոստովանել ամուսնու անյաջողութիւնը և այն առեարտասան կործանումը, որ հիմնել էր հայրը և որով այնքան հպարտ էր նա իր կենդանութեան ժամանակ: Այն միտքը, որ նա կարիք էր ունենալու պաշտպանելու այն, ինչ ամենից շատ էր սիրում աշխարհում, կազմում էր նրա ոյիը և մինոյն ժամանակ նրա թուլութիւնը...

Ժամի տասն և մէկն էր, երբ նա հասաւ Սավինի: Նա ոչ ոքի իմոց չէր տուել իր գալու մասին, ուստի և դղեակի կառքը չէին ուղարկել կայարանը, այնպէս որ նա սախլուած էր ուսով գնալ դղեակը:

Սաստիկ յուրած էր և ճանապարհը կոչտացած էր ու չոր, Քամբն ազատ-արձակ վշում էր խոպան դաշտերում և տերեաթափ ծառերի ու մացառների միջով անարգել անցնում դէպի գետը, Ցածր երկնքի տակ ձգուած էր գղեակի պարիսպների և ցանկապատների երկար գիծը, որով նա զատուում էր շրջակայ դաշտերից Տանիքի հերձաքարերը, մթնդել էին իրանց արտացոլացրած երկնքի նման, և այդ ամբողջ հոյակապ ամարանոցը, ուր ձմեռուայ գաժան նշից ամեն ինչ ճամրացել էր և ոչ մի տերե չըր երեռում ծառերի վրայ ու ոչ մի աղաւնի՝ կտուրների վրայ, այնպիսի տեսք ունէր, կարծես ոչ մի կենդանի բան չը կար մէջը բացի աւազանների խոնաւ ծփանքից և բարձրաբուն կազմամինների մրմունջից, որոնք ճկուում էին դէպի իրար, ճօնելով իրանց կատարներում խոռուռ ընկած կաչաղակարոյնները:

Հեռուից տիտուր ու մազը կերպարանքով էր երեռում կլէրին իր ջանէլութեան տառնը, կլէրին թւում էր, թէ նա նայում է իր վրայ այն սառը, արիստոկրատ կերպարանքով, որով նա սովորաբար նայում էր մեծ ճանապարհի անցորդներին, որոնք կանգ էին առնուում նրա վանդակապատի սրածայր ճաղերի առաջ:

Անշունչ իրերի գաժան կերպարանք:

Բայց չէ, ոչ այնքան գաժան, որովհետեւ Սազինին իր՝ փակուած տան տեսքով կարծես ասելիս լինէր նրան՝ «Յետ գնա... Ներս մի մտիր...». Եւ եթէ կլէրը լսած լինէր նրան, կը հրաժարուէր իր ծրագրից և իսկայն և եթէ կը վերադառնար Պարիզ ու կը պահպանէր իր սրափ անդորրութիւնը: Բայց խեղճիկը չը հասկացաւ տան ասածը և արդէն նիւֆառնդինդեան ահազին շունը, որ ճանաչել էր նրան ու չոր տերների միջով ցատքաեւսվի վազել դէպի նա, չնչում էր հերին փակ գարպասի միջով:

—Բարե, Ֆրանսուազ... որտեղ է պապիկը, —հարցրեց կլէրը պարտիզանուուց, որ եկաւ բանալու գարպասը՝ խոնարհ, շողափորթ ու դողդոջուն, ինչպէս զղեակի բոլոր ծառաները, երբ իրանց վրայ էին զգում տիրոջ աչքը:

Պապիկը իր դրասենեակումն էր, զիխաւոր չէնքից անկախ մի տաղաւարում, ուր նա ամբողջ օրեր էր անց կացնում ըրբելով իր թղթերի կապացները, մատեանները և ահազին կանաչարմատ հաշուեգրքերը մի տեսակ դիւնամոլութեամբ, որ յառաջ էր եկել նրա ուղղմական տղիտութիւնից և այն փանտասիկական տակաւորութիւնից, որ նրա վրայ մի ժամանակ գործել էր իրանց դիւղի նօտարի գրասենեակը:

Այդ բոպէին նա փակուել էր այնտեղ իր պահպանի հետ, որ մի տեսակ գիւղական լրտես էր, վարձկան մատնիչ, որ հա-

դորդում էր նրան կալուածում ու շրջակագում տեղի ունեցած բոլոր դէպեհը, բոլոր խօսք ու զրոյցները:

Կալուածատերի սիրելին էր դաւ նրա անունը Ֆույինա էր և նրա ճապաղ՝ խորամանկ ու արինուուշա գլուխը բոլորովին համապատասխանում էր այդ անուան ^{*)}:

Երբ թուր ներս մտաւ գունատ ու գողդոջուն իր մուշտակի մէջ, ծերուկը խսկոյն հասկացաւ, որ ինչ որ լորջ ու արտասովոր բան է տուղի ունեցել, և նշան արեց Ֆույինային, որ անհետացաւ, ալկուեց կիսարաց դռնով, կարծես թէ պառտկռելով պատի մէջ:

—Հը! ինչ է պատահել... ինչու ես այդպէս այլակերպուել, —հարցրեց պապը՝ նստած իր ահապին գրասեղանի յետեին:

Կլէրը յիրավի սսատիկ շիտոթուած, այլայլուած, այլակերպուած էր: Արագ քայլուածքը, ցուրտար, այն ճիգը, որ նա գործ էր դրել այդտեղ զալու համար, մի արտասովոր արտայայտութիւն էին տուել նրա դէմքին, որ այնքան ծանր ու անդորր էր լինում սովորաբար: Զը նայելով որ պապը ամեննեին ցանկութիւն ցոյց չը տուեց հետո համբուրուելու, նա գնաց համբուրուեց ու նըստեց կրակի առաջ, ուր չոր մամուռով պատած ցախը և պուրակի ծառուղիներում հաւաքած խոզակները՝ վառում էին կենսալից փայլով և հիւթալից ճարձատիւնով: Կլէրը, առանց ժամանակ կորցնելու նոյն իսկ քօղքի վրայի եղեամը թափ տալու, անմիջապէս սկսեց խօսել, հաւատարիմ իր վճռին՝ մտնելուն պէս յայտնել իր այցելութեան շարժառիթը, նախ քան ազդուելը այն երկիւղի և պատկառանքի մթնոլորտից, որ շըրջապատում էր պապին, դարձնելով նրան մի տեսակ ահեղ աստուածութիւն:

Լաւ սիրտ էր հարկաւոր չը շփոթուելու, խօսքը շընդհատելու համար այդ սրաթափանց հայեազքի առաջ, որ հէնց առաջին խօսքիցը չարախինդ փայլ ստանալով՝ պետուել էր նրա վրայ, և այդ փայրագ բերանի առաջ, որի անշարժ անկիւնները կարծես հուաւ էին եկել դիտառորեալ լոռութիւնից, յամառութիւնից և ամենաթեթև զգայնութեան բացասութիւնից: Կլէրը մի չնչով ասաց բոլորը, լի պատկառանքով, բայց առանց ստորացման և ծածկելով յուզումը ու հաստատութիւն տալով ձայնին իր խօսքերի մէջ պարունակուող ձշմարտութեամբը: Մարդ որ նրանց տեսնէր այդպէս դէմ առ դէմ, մէկին՝ սառը, հանգիստ, բազկաթուում երկար մեխնուած ու ձեռները մոխրագոյն բաճկոնի գրալանները խրած, իսկ միւսին՝ ուշադիր իր արտասանած

^{*)} Fouine=թռիոր (մի տեսակ կուզ):

ամենաշնչին խօսքի վերաբերմամբ, կարծես թէ այդ խօսքերից ամենն մէկը կարող էր դատապարտել իրան կամ արդարացներ — երբէք չէր ասիլ թէ պապ ու թռու են դրանք, այլ կը կարծէր անողատճառ, թէ մեղագրեալ է այդ՝ դատական քննիչի առաջ.

Ծերունին հոգով սրտով հրճւում ու հպարտանում էր իր յաղթանակով: Վերջապէս յաղթուեցին այդ գոռող միրօմօնները, Աւրեմն գեռ կարօտութիւն ունէին ծեր Գարդինուայից: Սնու փառութիւնը, նրա այդ գերիշխող յատկութիւնը, ակամայ արտայայտում էր նրա ամբողջ արտաքինի մէջ ծեր կլէրը խօսքը վերջայրեց, պապը բերանը բաց արեց ու, բնականօրէն, սկսեց «ես հաւատացած էի, որ այդպէս կը լինի... ես ասում էի... ես դժուէի, որ վերջը յայսնի կը լինի...» խօսքերով, և, շարունակելով նոյն գոռեհիկ ու վիրաւորական եղանակով, վերջայրեց ասելով: «ի նկատի ունենալով իրակզբունքները, որոնք շատ զաւ յայտնի են իր ընտանիքին», նա չի կարող պարտք տալ ոչ մի սուս:

Այն ժամանակի կլէրը խօսեց իր մանուկի մասին, իր ամուսնու անուան մասին, որ միենոյն ժամանակի և իր հօր անունն էր և որ խայտառակրուելու էր չնորհիւ սնանկութեան: Ծերունին մնաց նոյնքան սառն, նոյնքան անողոք, որքան և առաջ, և օգտուեց նրա ստորացումից նրան աւելի ևս ստորացնելու համար, որովհետեւ նա պատկանում էր խկական գեղջուկների տիպին, որոնք գետին տագալուած թշնամուց չեն հեռանում առանց իրանց ստնամանների մեխերի հետքը թողնելու նրա երեսին *):

Ես քեզ միայն այնքանը կարող եմ ասել, թոռնիկս, որ Սամինին բաց է ձեր առաջ... Թող մարդու դայ այստեղի ինձ էլ էլնց մի քարտուղար է հարկաւոր: Ժօրմը քարտուղարութիւն կ'անի և կը ստանայ հազար երկու հարիւր Գրանկ տարեկան ոռնիկ ու բոլորիդ ապրուսար... Առաջարկիր նրան այս պայմանները իմ կողմից ու վեր կացէք եկէք...

Կլէրը ոսքի կանգնեց զայրացած: Նա եկել էր իրրեւ թոռ, իսկ այստեղ նրան ընդունում էին իրեն մուրացկանի: Փառք Աստուծու, գեռ այդտեղ չէին հասել:

— Կարծում ես, — ասաց պ. Գարդինուան աչքը վայրագ կերպով թարթելով:

Կլէրը, դոզգովուն, գնաց գէպի դուռը առանց պատասխանելու նրան: Ծերունին նշան արեց, որ կանգնի:

— Զգոյշ կաց, դու չը գիտես, թէ ինչից ես հրաժարեւում...

*) Արևմտեան Եւրոպացում գիտացիների ստնամանների կրունկներին մեծ մեխեր են խփուած լինում:

Կանւմ ես, քո օգտի համար էի առաջարկում, որ համոզիս մարդուդ գալ այսուել... Դու չը գիտես, թէ ինչ կեանք է վարում նա այնտեղ... Չը գիտես, ի հարկէ, ապա թէ ոչ չէիր գալ ինձնից փող ինդրելու, որպէս զի իմ փողն էլ գնայ այնտեղ, որ քոնն է գնացել... Օ՛հ, ինձ շատ լաւ յայտնի են քո հոգեւորի գործերը, ես իմ ոստիկանութիւնն ունեմ Պարիզում և նոյն իսկ Անիէրում՝ ինչպէս Սավինիում... Ես գիտեմ, թէ այդ սուս ճգնաւորը որտեղ է անց կացնում գիշեր-ցերեկ, և չեմ ուզում, որ իմ փողերը գնան այնտեղաբենք, ուր նա է գնում: Այդ տեղերը բաւականաչափ մաքուր չեն ազնիւ միջոցներով ձեռք բերած փողերի համար:

Կլէրը զարմացած ու դառնայած չոեց աչքերը, զգալով, որ այդ բոպէին ինչ-որ սարսափելի դրամա էր մտնում իր կեանքի մէջ մատնութեան ցած դոնով: Ծերունին շարունակեց քմծիծաղ տալով.

— Օ՛օ, շատ փշարարն է այդ Սիդօնին:

— Սիդօնին:

— Ինչ արած, բերնիցս արդէն դուրս թռաւ անունը... Ասենք, միւնոյնն է, մի օրից մի օր դու անպատճառ իմանալու էիր Նոյն իսկ զարմանալի է, որ այգան ժամանակ... Բայց դուք, կինարմատներդ, սարսափելի մնծամիտ էք... Մաքներովդ շատ գծուար է անց կենում, թէ կարող են ձեզ դաւաճանել... Էհ, այս, Սիդօնին է խժուել մարդուդ փողերը և անշուշտ իր ամուսնու համաձայնութեամբ:

Ու անինայ կերպով պատմեց Կլէրին, թէ որտեղից էր Սիդօնին փող ձեռք բերել Անիէրի ամարանոցի, ձիերի, կառքերի համար և թէ ինչպէս էր կահաւորուած նրանց փոքրիկ ու սիրուն բնիկը Գարրիէլ փողոցում: Նա ամին ինչ բացատրում էր տեղն ու տեղին, մանրամամորէն: Պարզ երեսում էր, որ, մի նոր առիթ գտնելով իր լրտեսամոլութիւնը գործ դնելու, նա մեծ եռանդով օգտուել էր այդ առիթից: Թերևս, բացի դրանից, այդ զէպքում անորոշ կերպով դեր էր խաղացել նաև մի խուլ զայրոյթ Սիդօնիի դէմ, մի քէն, որ բղխում էր երբէք չը խոստովանած ծերունական սէրից:

Կլէրը լսում էր առանց բան ասելու, թերահաւատութեան սիրուն ժպիտը երեսին: Այդ ժպիտը գրգռում էր ծերունուն, խթանում էր նրա չարակամութիւնը... Ա՛խ, դու ինձ չես հաւատում... Ա՛խ, դու ապացոյցներ ես ուզում... Եւ նա տալիս էր ապացոյցներ, կուտակում էր նրանց իրար վրայ, կարտում էր նրա սիրտը դանակով: Եթէ չի հաւատում, թող գնայ Լա-Պէ փողոցի գոհարավաճառ Դարշի մօտ: Երկու շաբաթ առաջ ժօրժը

այնտեղ մի աղամանդէ վզնոց էր առել երեսուն հազար ֆրանկով։ Սիդօնիի կաղանոշէքն էր այդ երեսուն հազար ֆրանկի աղամանդ՝ սնանկանալու բոպէին։

Եթէ ամբողջ օրը խօսէր ծերունին, կլէրը չէր ընդհասի նրա խօսքը, խեղճը զգում էր, որ եթէ ամենաշնչին ճիգ անգամ գործ դնէր, արտասուզը դուրս կը զեղար լցուած աչքերից, իսկ նա, այդ քաղցրիկ, այդ արիասիրտ էակը, ուզում էր ժըպտալ ընդհակառակը, ժպտալ մինչև վերջը։ Միմիայն ժամանակ առ ժամանակ նա նայում էր դէպի ճանապարհի կողմը։ Նա շտապում էր դուրս գալ, փախչել այդ չարասիրտ ճայնի հնչիւնից, որ հալածում էր նրան անգթաբարար։

Վերջապէս ծերունին լոեց, ինչ որ ունէր ասելու ասաց, կլէրը զլուխ տուեց ու գնաց դէպի դուռը։

—Գնո՞ւմ ես... ինչո՞ւ ես այդպէս շտապում... ասաց պապը դուրս գալով նրա յետեից։

Իսկապէս նա մի քիչ ամաչում էր իր վայրագութիւնից։

—Զես ուզում նախաճաշել ինձ հետ։

Կլէրը զլսով չէ ասաց, խեղճը ոյժ չունէր խօսելու։

—Գոնէ սպասիր, որ լծեն... տանեն, կայարան հասցնեն։

Զէ, չէ ու չէ։

Եւ կլէրը շարունակում էր քայլել, ծերունին էլ նրա յետեից։

Ճակատը բարձր ու հապարտ՝ կլէրը անցաւ այդպէս բակով, որ լի էր նրա մանկութեան յիշատակներով, առանց գէթ մի անգամ յետ նայելու։ Եւ սակայն որքան քաղցր ծիծաղների արձագանքներ, որքան արեի շողքեր էին մնացել իր ջահէլութեան օրերից այդ բակի ամենամանը աւազահստիկների մէջ։

Նրա սիրած ծառը, նստարանը իրանց մշտական տեղումն էին, նա ոչ մի հայեացը չը զցեց նրանց վրայ, ոչ էլ թռչնանցի փասիանների, ոչ նոյն իսկ գոմիոռ կիսսի վրայ, որ զլուխը քաշ հետեւում էր նրան, սպասելով փաղաքշանքի, որին չարժանայաւ սակայն, կլէրը ներս էր մտել այդտեղ իբր այդ տան գաւակ, իսկ դուրս էր գալիս իբր մի խորթ մարդ՝ սարսափելի մատանշութեամբ, որ միմիայն սաստկանալ կարող էր երջանիկ ու անդորր անցեալի ամենաշնչին յիշողութիւնից անգամ։

—Մնաք բարե, պապի։

—Գնաս բարե։

Եւ գարպասը շրխկաց նրա յետեից, Մենակ մնալով՝ կլէրը սկսեց արագ-արագ քայլել, գրեթէ վագել, նա չէր քայլում, այլ զլուխ էր փախցնում։ Յանկարծ, կալուածի պարսպի ծայրին

հանելով, նաև նկատեց այն փոքրիկ՝ քաղցրանիկներով ու այժմերևներով շրջապատուած կանաչ դռւաբաւուր գտնուում էր դղեակի պօստարկղը, Բնազդօրէն նաև կանգ առաւ, յիշողութեան այն յանկարծական միախումներից մէկի ագղեցութեան տակ, որոնք տեղի են ունենում մեր մէջ վճռական բուգիներին և վերին աստիճանի պարզ կերպով վերարտադրում են մերաշ քի առջև մեր կիսակրի ամենաաննաշն անցքերը, որոնք որ և է առնչութիւն ունեն ներկայ աղջտի կամ ուրախութեան հետ ի՞նչ բան զարթեցրեց այդ յիշողութիւնը նրա մաքում թերեւ արկը, որ յանկարծ ամպերի միջից դուրս գալով, իր շեղ ու վարդագոյն շողերով լուսաւորեց լայնապարած դաշտը այդ ձմերային կէսօրավերջին այնպէս, ինչպէս օգոստոսին՝ վերջալոյսի ժամին թերեւ նրան շրջապատող լուսութիւնը, որ խան գարում էին միայն ընութեան ներդաշնակ շշուկները, որոնք դրեթէ միակերպ են լինում տարուայ բոլոր եղանակներին:

Այսպէս թէ այնպէս նա տեսաւ ինքն իրան այնպէս, ինչ պէս որ էր այդ նոյն աեզում երեք տարի առաջ, այն օրը, երբ նա պօստարկղը մի նամակ գցեց, որով Սիդօնիին հրաւերում էր գալ, մի ամիս անց կացնել իր հետ ամարանցում Սիրաը վկայում էր, որ իր դժբախտութիւնը այդ բուպէիցն էր սկսուել ամիս, եթէ իմանայի... եթէ իմանայի... եւ նրան այնպէս էր թւում, թէ գեռ ևս զգում է մատների ծայրին՝ արկղը ընկնելու պատրաստ ողօրկ ծրարը:

Ու մատածելով, թէ ի՞նչ միամիտ, յուսալից ու երջանիկ մանուկ էր ինքը այդ միջոցին, նա, չը նայելով իր սովորական հեղութեանը, զայրոյթով վառուեց կեանքի անարդարութեան դէմ Շնչու, ինչու ի՞նչ եմ արել ես, հարցնում էր նա ինքն իրան:

Թետոյ, յանկարծակի վճռեց. «Ոչ ճիշտ չէ այդ, Անկարելի ե այդ... Սուտ են ասում...» Եւ շարունակելով ճանապարհը գէպի կայարանը, թշուառ կինը աշխատում էր համոզել ինքն իրան, հաւատացնել, որ լածը սուտ է, Բայց այդ չէր յաջողաւում նրան:

Ընդնշմարուած ճշմարտութիւնը սրօլուած արեկ նման է, որ աւելի է յոգնեցնուած մարդուս աշքերը քան ամենավառ շողքը, Խեղճ կինը իր ուզեցածից աւելի պարզ էր տեսնում այն կիսախաւարի մէջ, որով գեռ շրջապատուած էր նրա դժբախտութիւնը. Այժմ նա հասկանում էր, կարողանում էր բացարկ իր ամուսնու կենցազավարութեան տարօրինակութիւնները, նրա բացակայութիւնները, մատանշութիւնները, որոշ օրերին ունեցած զփոթուած կերպարանքը և այն հանգամանքը,

որ երբեմն տուն գալիս նա ամենայն մանրամասնութեամբ պատմում էր, թէ որտեղարկներ է եղել այդ օրը, շարելով իրար յետեց զանազան անուններ, իբր ապացոյներ, որ նրանից պահանջող չը կար. Այդ բոլոր նկատումներից ակնյայտնի երևում էր ամուսնու մեղքը: Սակայն Կէրը գեռ չէր ուզում հաւատալ այդ բանին և ապասում էր Պարիզհամնի՝ բազոր կասկածանքներին վերջ տալու համար:

Ոչ ոք չը կար կայարանում, որ մի փոքրիկ մնկուսի և տխուր կայարան էր, ուր ոչ մի ճանապարհորդի չի կարելի նանդիպել ձմեռը, Կէրը նստած այնտեղ սպասում էր գնադքին, մօքամօլոր նայելով կայարանապետի մելամազիկ պարտէգին, և երկաթուղու գծի պատնէշին փաթթաթուած պատուակների մնացորդներին: Յանկարծ մի թաց ու տաք շունչ զգաց, իր ձեռնոցի վրայ, Նրա բարեկամ Կիսան էր այդ, որ յետէիցն եկել էր և այժմ յիշեցնում էր իրանց կատարած երբեմնեան ախորժ զրուանքները: Երբ ինքը թրվում էր, զուսպ կերպով ցատքը տում, արտայայտելով իր խնարհ հրճուանքը, և ի վերջոյ իր փառահեղ սպիտակ մորթիով երկարուծիկ փակւում իր տիրուհու ոսքերի մօտ, սպասողական դահլիճի սառը յատակի վրայ: Տեսնելով այդ խոնարհ փազաքշանքները, երկչոտ ու անձնուեր համակրութեան այդ արտայայտութիւնները, Կէրը այլևս չը կարողացաւ պահել լացն ու ակսեց նեկեկալ: Բայց յանկարծ նա ամօթ զգաց իր թուլութիւնից, Վեր կացաւ, տուն ուղարկեց շանը, տուն ուղարկեց նրան անողոք կերպով, ձայն տալով, ձեռքով նշան անելով, հեռուից ցոյց տալով՝ գղեակը այնպիսի կերպարանքով, որ Կիսար երբէք չէր տեսել նրա երեսին: Յետոյ նա շտապով սրեց աչքերն ու թաց ձեռքը, որովհետև Պարիզի գնացքը գալիս էր և նա զիտէր, որ մի բոպէից յետոյ իրան պէտք է լինելու իր ամբողջ քաջութիւնը:

Վագօնից գուրս գալուն պէս կէրի առաջին գործն այն եղաւ, որ գնաց Լա-Պէ փողոցի այն գուարավաճափ մօտ, որ— պապի ասելով— ժօրմին աղամանդէ վզնոց էր ծախել, եթէ այդ ժիշա էր, մնացած բոլորն էլ ճիշա կը լինէր, կեղծը այնքան վախենում էր ծշմարտութիւնը իմանալուց, որ այդ շքեղ խանութին հասնելով նա կանդ առաւ նրա առաջը, չը համարձակելով ներս մտնել: Մի բան արած լինելու համար՝ նա այնպէս կերպարանք ընդունեց, իբր թէ ուշի ուշով՝ գիտում է առւփերի թափշների վրայ գրուած գոհարները, և յիրաւի ով որ տեսնէր նրան, այդպէս գողտրիկ իր համեստ զգեստում, խոնարհուած մանրաշող ու զրաւիչ ակունքների վրայ, աւելի շռւտ կը կարծէր, թէ մի երջանիկ կին է այդ, որ եկել է որ և է պաճու-

ձանք ընտրելու, քան կ'ենթադրէր, թէ մի ցաւատանջ ու խռով-
ուած հոգի է այդ, որ եկել է այդտեղ փնտոելու իր՝ կեանքի
գաղտնիքը:

Ժամի երեքն էր կէսօրից յետոյց Զմեռը, ցերեկուայ այդ
պահին, Լա-Պէ փողոցը միանգամայն շացուցիչ տեսք է ունե-
նում: Կարճ առաւօտուայ և զազահաս երեկոյեան անջրպետում
կեանքը շտապ-շտապ ընթացք է ստանում այդ փարթամ թաղե-
րում: Կառքերը երթեեկում են արագ-արագ, անիները դղրդում
են անընդհատ և մայթերի վրայ տեղի է ունենում կօքէտ ու
վասդ անց ու դարձ, մետաքսէ զգեսաների, մուշտակների խըշ-
խըշոց: Զմեռը Պարիցի համար տարուայ ամենալաւ եղանակն
է: Գեղեցիկ, երջանիկ, փարթամ տեսնելու համար այդ ստա-
նայական Պարիզը, պէտք է զննել նրա կեանքը ձիւնով բեղուն,
ցածիկ երկնքի տակ: Բնուեթինը, այսպէս ասած, բացակայ է
նկարից: Ոչ քամի կայ, ոչ արեւ լոյս միմիայն այնքան կայ, որ
ամենաազօտ գոյները, ամենաչնչին ցոկերը հիանալի տեսք կա-
րողանան ստանալ, սկսած յուշարձանների գորշ երանգներից
և վերջացրած կանացի զգեստները զարդարող ոև յուլունեն-
րով: Թատրոնների, նուազահանդէմների յայտարարութիւնները
շոշողում են՝ կարծես լուսաւորուած բամպայի ճածանչներից:
Խանութները չեն դատարկում ոչ մի րոպէ: Թւում է, թէ այդ
բոլոր մարդիկ պատրաստութիւններ են տեսնում ինչոր յարա-
տե տօնի համար: Եթէ մի վիշտ խառնում է յանկարծ այդ
ժխորին, այդ իրաբանցման, այդ հակապատկերի չնորհիւ աւելի
ևս սոսկալի է թւում նա: Հինգ րոպէ կլէրը մահից վատթար
տանջանքներ կրեց: Այստեղ, Սափինիի ճանապարհին, ամայի
դաշտերի անհուն տարածութեան մէջ, նրա յուսահատութիւնը
շաղ էր անցնում զով օդում և կարծես աւելի քիչ տեղ էր բըռ-
նում: Այստեղ նա խեղդում էր նրան: Նրա կողքին հնչող ճայ-
ները, երթեեկողների քայլերն ու անդիտակցական շփումը, այդ
ամենը սաստկացնում էր նրա տանջանքը:

Վերջապէս նա ներս մտաւ...

—Այո, այո, տիկին... Պարոն Ֆրօմօնը... Աղամանդներից
ու ալմաստներից շինուած մի վկնոց: Զեղ համար կարող ենք
բոլորովին նմանը շինել քսան հինգ հազար ֆրանկով:

Մարդու տուածից հինգ հազար ֆրանկ պակաս էր այդ:

—Շնորհակալութիւն, պարօն, —ասաց կլէրը: —Կը մոտածեմ:
Աչքը յանկարծ ընկաւ գիմացի հայելուն և նա սարսափ
զգաց, տեսնելով իր կապտածիր աչքերը և մեռելակերպ գու-
նատութիւնը: Շտապով գուրս եկաւ, ձգուելով, որպէս զի վայր
շընկնէր:

Այժմ մի հոգս միայն ունէր նա—իմախչել փողոցից, ժխուրից, մենակ մնալ, մէն-մենակ, որպէս զի կարողանար ընկղմուել, խորասուզուել այն կոկտալից, աև մաքերի անդունդը, որոնք յորձանք էին տալիս նրա հոգու խորքում: Օ՛հ, տմարդ, լիրք ամուսին... իսկ ինքը գեռ անցած գիշեր միսիթարում էր նրան, գրկում էր նրան:

Յանկարծ, ինքն էլ չը գիտէր թէ ինչպէս, նա հասաւ գործարանի բակը: Ի՞նչ ճանապարհով էր եկել, Ոտքով էր եկել, թէ կառօքվ: Ոչինչ չէր յիշում: Նա անգիտակից վիճակի, կարծես երազի մէջ էր եղել մինչ այդ բոպէն, իսկ երբ մօտեցաւ իրանց բնակարանի պատշգամբին, ուշքը գլուխն եկաւ և նա նորից զգաց կոկտալից և բիրտ իրականութիւնը, Ուխալէրը այստեղ կանգնած վերև էր ուղարկում արկղներով ծաղկիներ այն շքեղ ինչոքի համար, որ կինը տալու էր այդ երեկոյ: Իր սովորական հանգիստ տրամադրութեամբ նա զեկավարում էր բանուորների աշխատանքը, բանում էր բարձր ճիւղերը, որ նրանք կարող էին կոտրել: «Այդպէս մի տարէք... Կողքահան անց կացրէք... Զգոյշ, գորգին չը գիտցնէք»...

Զուարձութեան և իրախճանքի մթնոլորտը, որ այնքան զգուանք էր ազգում նրան մի քիչ առաջ փողոցում, հալածում էր նրան նոյն իսկ իր տանը: Ճակատազրի հեգնութիւնը շափազնց էր արդէն: Նա վրդովուեց վերջապէս, և մինչդեռ Ուխալէրը բարեւում էր նրան՝ սիրալիք ու պատկառալից կերպով ինչպէս միշտ: Նա, վերին աստիճանի զգուանք արտայայտելով դէմքի վրայ, ուղղակի անցաւ առանց նրան բան ասելու, առանց տեսնելու այն զարմանքը, որից նրա աշքերը մնացել էին չըռուած:

Կլէրը արդէն վճռել էր իր անելիքը:

Զայրոյթը, աղնիւ ու արդար զայրոյթն էր այսուհետեւ առաջնորդ լինելու նրա դորձութիւններին:

Ներս մանելուն պէս, վռազ-վրազ համբուրելով երեխայի թարմ այտիկները, նա վաղեց մօր սենեակը:

— Շուտ արէք, մայրիկ, հագնուեցէք... Գնում ենք... Գնում...

Պառաւը դանդաղ կերպով վեր կացաւ բազկաթոռից, ուր նստած ուշի ուշով սրբում էր իր ժամացոյցի շղթան, անվերջ նախազգուշութիւններով մտյնելով քորոյը ամեն մի օղակի մէջ: Կլէրը հազիւ զսպեց անհամբերութիւնը.

— Դէ, շուտ արէք, շուտ... Հաւաքեցէք ձեր իրեղէնները:

Զայնը գողում էր, և մաքրասիրութիւնը հետզհետէ խելաչոկտեմբեր, 1901.

գարութեան հասցրած պառաւի սենեակը, որ պլազում էր իստակութիւնից, սոսկալի թուաց նրան կեանքի այն սև բոպէ-ներից մէկն էր նրա համար, որոնց միջոցին մի չքացած իլիւզիա չքացնում է բոլոր միւս իլլիւզիաները և հիմաթափուած աչքի առջև բանում է մարդկային գժբախտութիւնը մինչև ամենահեռաւոր խորքերը: Այդ առաջին անգամն էր, որ նա պարզ զգում էր իր միայնութիւնը՝ կիսախնելագար մօր, անհաւատարիմ ամուսնու և բոլորովին փոքրիկ երեխայի շրջանում, բայց այդ զիտակցութիւնը աւելի ևս հաստատուն էր գարձնում նրա վճիռը:

Մի բոպէում ամբողջ տունը սկսեց զբաղուել այդ յանկարծական ու անակնկալ ճանապարհորդութեան պատրաստութիւններով: Կլէրը շտապեցնում էր ապշած ծառաներին, հադցնում էր մօրը և երեխային, որ ժպտում էր այդ իրարանցման մէջ, կլէրը ուզում էր ճանապարհ ընկնել նախ քան ժօրժի գալը, որպէս զի նա գար ու օրօրոցը դատարկ գտնէր և տունը ամայի: Ուր էր գնալու: Ինքն էլ չը զիտէր, թերեւս Օոլէանում ապրող մօրաքրոջ մօտ, թերեւս Սավինի, ուր որ էլ լինի: Ամենասպիսաւորը այն էր, որ գնար, փախչէր այդ դաւաճանութեան ու ստութեան միջավայրից:

Ահա նա իր սենեակումն է և բաները գլխին կիտած՝ դարսում է պայուսակները: Տիսնւր զբաղմունք: Ամեն մի իր, որին ձեռք էր տալիս, զարթեցնում էր նրա մէջ մտքերի, յիշողութիւնների մի ամբողջ աշխարհ: Զէ որ շատ քան է մնում մուզնից մեր գործածած իրերի մէջ: Խեղճ կոոչ լացը գալիս էր երբեմն մի անուշահոտութեան բուրմունքից, մի կտոր ժանեակից: Յանկարծ, ծանր ոտնաձայն լսուեց հիւրասենեակից, որի դուռը կիսաբաց էր մնացել, ու յետոյ մէկը կամաց հազայ, կարծես իմաց տալու համար, որ մարդ կայ այստեղ: Կլէրը կարծեց, թէ Ռիսլէրն է այդ, որովհետև միայն նա իրաւոնք ունէր մտնել նրա մօտ այդպէս արձակ-համարձակ: Կլէրի համար այնքան զզուելի էր տեսնել այդ կեղծաւոր կերպարանքը, այդ շինծու ժպիտը, որ վազ տուեց դուռը փակելու:

— Ոչ որի չեմ ընդունում:

Բայց դուռը պինդ պահել էին, և բացուածքի միջով երեաց Սիգիզմունդի քառակուսի գլուխը:

— Ես եմ, տիկին,—ասաց նա կամացուկ: — Եկել եմ փողը ստանալու:

— Ի՞նչ փող, — հարցրեց կլէրը, որ չէր յիշում այլ ես, թէ ինչու էր ինքը գնացել Սավինի:

— Բայց... վաղուայ վճարելլքներիս համար: Պ. Ժօրժը

դուրս գալիս ասաց, որ գուշ շուտով կը յանձնէք ինձ պէտք եղած գումարը:

—Ախ, այո... այո... Հարիւր հազար ֆրանկ... Այդքան փող չը կայ մօտս, պարո՞ն Պլանիւս, ոչինչ չը կայ մօտս:

—Ուրեմն,—ասաց գանձապահը տարօրինակ ձայնով, կարծես թէ ինքն իր հետ խօսելով,—ուրեմն կոտր ենք ընկեր:

Ու կամաց-կամաց շուռ եկաւ ու գնաց: Կոտր ընկնել...

Կլէրը նստեց, զարհուրած, ապշած:

Մի քանի ժամից ի վեր սեփական երջանկութեան կործանումը նրան մոռանալ էր տուել առևտրական տան կործանումը. բայց այժմ նրա ուշքը գլուխն եկաւ:

Այդպէս ուրեմն՝ նրա ամուսինը մնանկ էր:

Մի քիչ անցած, տուն վերադառնալով, նա իմանալու էր իր դլիմին եկած աղէտը և միենոյն ժամանակ իմանալու էր, որ կինն ու երեխան հեռացել են տանից, թողնելով նրան միայնակ այդ ուն օրին:

Մէն-մենակ, նրան, այդ մեղկ, այդ տկար էակին, որ միայն լալ, գանդատուել ու ճակատադրին բառնցք ցոյց տալ գիտէր, ինչպէս մի մանուկ: Ի՞նչ էր լինելու թշուառի վիճակը:

Կլէրը խղճում էր նրան, չը նայելով նրա յանդաւորութեանը:

Բացի այդ, նա մտածեց, թէ մի գուցէ իր հեռանալը այն տպաւորութիւնը գործի, թէ ինքը փախել է մնանկութիւնից, աղքատութիւնից:

Փօրժը կարող էր ասել.

«Եթէ հարուստ լինէի, նա ինձ կը ներէր»:

Կարող էր կլէրը թոյլ տալ, որ այդպիսի կասկած մնար նրա սրտում:

Կլէրի հոգու նման մի վեհանձն ու հպարտ հոգու համար այդքանը բաւական էր վճիռը փոխելու համար: Մի ակնթարթում նրա ամբողջ զգուանքը, ամբողջ վրդովմունքը անցաւ և կարծես մի պայծառ լոյս յանկարծ լուսաւորեց նրա առաջ նրա պարտականութիւնը: Երբ որ եկան, ասացին, որ երեխան հագրած է ու պայտասակներն էլ պատրաստ, նա արդէն կայացրել էր իր նոր վճիռը:

—Աւելորդ է, —պատասխանեց նա մեղմօրէն, —չենք գնում:

III

Պայմանաժամբ

Կէս գիշերից անցել էր. ժամի մէկն էր խփում Սէն-Ժէռ-վէյի մեծ ժամացոյցը։ Այնքան ցուրտ էր, որ օդի մէջ ցիր ու ցան մանրամաղ ձիւնը սառում էր ճանապարհին և թափուելով գետին՝ կիտում էր սալայատակի վրայ սպիտակ ու խշտան խաւով։

Ռիալէրը, վերարկուի մէջ փաթաթուած, արագ-արագ վերադանում էր գարեջրատանից ամայի Մառէյով։ Շատ գոհ տրամադրութեան մէջ էր նա։ Իր երկու մշտական փոխառուների՝ Շէրի և Դըլօրէլի հետ նա այդ երեկոյ գարեջրատանը տօնել էր իր առաջին դուրսելքը, այն երկարատև ճգնութեան վերջաւորութիւնը, որի ընթացքում նա հսկում էր իր տպագրիչ մեքենայի պատրաստումը՝ գիւտ անողի սովորական խարիսխումներով, հրձուանգներով և անյաջողութիւններով։ Երկար, շատ երկար էր տեսել այդ։ Վերջին վայրկեանին մի պակասութիւն էր աչքի ընկել։ Արգելվը լաւ չէր բանում, այնպէս որ նա ստիպուած եղաւ վերսկսել ծրագիրները, նախահաշիւները։ Վերջապէս, այդ օրը փորձել էին նոր մեքենան։ Ամեն ինչ հիանալի յաջողներ էր։ Ռիալէրը ցնծում էր Նրան թւում էր, թէ ինչքը վերջապէս կարողացաւ վճարել իր պարտքը, յատկացնելով ֆրումների առևտրատանը այն օգուտը, որ ստացուելու էր իր նոր գիւտից, որ պակասեցնելու էր բանուորների աշխատանքի օրերը և կրկնակի շահարեր ու հոչակաւոր դարձնելու գործարանը։ Ուստի և գեղեցիկ երազների էր անձնատուր եղել գարեջրատանից տուն վերադառնալիս, և նրա քայլերը հնչում էին խրոխտաբար, արձագանք տալով նրա մաքերի գոհ ու հաստատուն ընթացքին։

Ի՞նչ ծրագիրներ, ի՞նչ յոյսեր։

Այժմ նա կարող էր Սնիէրի շալէյի տեղ, որ արդէն խըղճուկ էր թւում Սիդօնիին, առնել մի գեղեցիկ կալուած Պարիզից տասը, տասնուհինգ մղոն հեռաւորութեան վրայ, աւելի մեծ թոշակ տալ պ. Շէրին, աւելի յաճախ փող տալ Դըլօրէլին, որի խեղճ կինը ուժասպառ էր լինում աշխատանքից. վերջապէս կարող էր Պարիզ բերել տալ ֆրանցին։ Այդ նրա ամենասրտագին փափագն էր։ Նա շարունակ մտածում էր այդ թշուառ պատանու մասին, որ սախպուած էր եղել պանդխտել մի անառողջ երկիր և ենթարկուել այնտեղ մի բռնակալ վարչութեան,

որ, արձակուրդ տալով իր ծառայողներին, գրեթէ անմիջապէս յետ էր կանչում նրանց առանց որ և է բացատրութեամս: Խեղճ մարդը չէր կարողանում ամենեին մոռանալ ֆրանցի յանկարածական ու անհասկանալի վերադարձ գէպի իր պաշտօնատեղին՝ Պարիզում այնքան կարձ միջոց մնալուց յետոյ, որ ինքը չէր կարողացել մի կարգին առնել կարօտը, որ աւելի ևս սաստկացել էր այդ տեսակցութեան չորհիւ վերակենդանացած եղբայրական մտերմութեան և կենակցութեան յիշողութիւնների ազդեցութեան տակ: Ուստի և մտադիր էր, տպագրիչը գործի գցելուց յետոյ, մի անկիւն գտնել գործարանում, ուր ֆրանցը կարսղանար օգտակար լինել և կարգին ապագայ ստեղծել իր համար: Ի՞նչպէս միշտ, այժմ էլ Ռիսլէրը միմիայն ուրիշների երջանկութեան մասին էր մտածում: Նրա միակ հսական հանցուքը այն էր, որ ժպտերես տեսնէր ամենքին իր շուրջը:

Այդպէս շատպշտապ նա հսաւ Վիյէլզօդրիէտ փողոցի անկիւնին: Իրանց տան առջեր երեսում էր կարգերի մի երկար շարք և նրանց լապտերների ցոլքը փողոցում ու ձիւնից պատրսպապանների ստուերները այն խորշերում ու անկիւններում, որոնք այդ հին ապարանքների պատերում մնացել են չը նայելով ուղղագիծ մայթերի կառուցման, կենդանութիւն էին տալիս այդ ամայի ու լրիկ թաղին:

«Ախ, ճիշտ որ,—մտածեց Ռիսլէրը.—այսօր մենք երեկոյթ ունենք»: Նա յիշեց, որ Սիդօնին այդ օրը երաժշտական ու պարի երեկոյթ էր կազմել, որին ներկայ լինելուց, սակայն, ազատել էր նրան, «լաւ իմանալով, որ նա սաստիկ զբաղւած է»: Այդ պարահանդէսի արձագանքները աւելի են սաստկացրին նրա հրճուանքն ու հպարտութիւնը, խառնուելով նրա վարդագոյն ծրագիրներին և հարսաւանալու վեհանձն երազանքներին: Մի տեսակ հանդիսաւորութեամբ հրեց նա ծանր դարպասը, որ կիսաբաց էր թողնուած եկող-գնացող հիւրերի համար, և պարտէզի խորքում տեսաւ ապարանքի ամբողջ երկրորդ յարկը, որ լուսաւորուած էր փառահեղ կերպով:

Վարագոյրների սաւառուն շղարշի յետեին գնում-գալիս էին մարդկանց ստուերներ. նուազախումբը, որի գոյութիւնը գուշակուում էր խոռվ հաշիւնների յաջորդաբար գրոհ տուող ու յետ ընկրկող ձայնից, կարծես հետեւում էր այդ ստուերների շարժումներին: Պարում էին: Մի բոպէ Ռիսլէրը յառեց իր հայեացքը այդ պարերեկոյթի ֆանտաստիկական տեսարանի վրայ և դահլիճին կից սենեակում ճանաչեց Սիդօնիի դիմաստուերը:

Պերճազգեստ և ուղղաձիգ կանգնած էր նա այնտեղ՝ հայ-

նելու մէջ իրան նայող սիրուն կնոջ դիրքով՝ նրա յետելին մի աւելի փոքրիկ ստուեր, անշուշտ տիկին Դօբսօնը, ուղղում էր հագուստը, զիթն կապած ժապաւէնանդոյցը, որի երկար ու սաւառուն ծայրերը հասնում էին մինչև շրջազգեստի տուաթը Սյդ բոլորը շատ անորոշ կերպով էր երեսում, բայց Սիդօնիի կանացի գողտրիկութիւնը աչքի էր ընկնում նոյն խոկ այդ հացիւ նշմարուող գծերում, և Ռիսլէրը երկար ժամանակ կանգնած էր հիացմունքով դիտում էր նրան:

Առաջին յարկը զարմանալի հակապատկեր էր կազմում երկրորդին: Ոչ մի տեղ լոյս չը կար, բայցի կարմրամանիշակագոյն պաստառներով պատած ննջարանից, ուր վառում էր մի փոքրիկ լամպ: Ռիսլէրը նկատեց այդ բանը, և որովհետեւ ֆրոմօնների երեխան մի քանի օր առաջ հիւանդացել էր, նա անհանգստացաւ, յիշեց այն յուզմունքը, որի մէջ գտնուում էր տիկին Փօրժը, երբ կէսօրից յետոյ անցաւ իր կողքով, ուստի յետարձաւ դէպի դարպասը Աշիլլ քեռուց տեղեկութիւններ հարցնելու համար:

Աշիլլ քեռու սինեակը լիքն էր մարդկանցով: Կառապան ները վառարանի մօտ հաւաքուած տաքանում էին, զրոյց էին անում ու ծիծաղում իրանց չիբուխների ծխի մէջ: Ռիսլէրը ներս մտնելուն պէս՝ յանկարծ տիրեց խորին լուսթիւն և գէմքերը ստացան հետաքրքիր, ծաղրական ու խուզարկու արտայացտութիւն: Երեկի նրա մասին էին խօսում:

—Ֆրօմօնների երեխան գեռ ևս հիւանդ է... հարցրեց նա

—Ոչ: Երեխան չէ հիւանդ, այլ պարոնը:

—Պարոն Փօրժը հիւանդ է:

—Այո, երեկոյեան տուն գալուց յետոյ վատ զգաց իրան իսկոյն գնացի բժշկի յետելից... Բժիշկն ասաց, որ ոչինչ չը կամ միայն թէ հանգստութիւն է հարկաւոր պարոնին:

Եւ մինչ Ռիսլէրը փակում էր դուռը, քեռի Աշիլլը կիսաձայն աւելացրեց ստորադաս մարդկանց յատուկ կէս երկչոսկ կէս յանդուգն աներեսութեամբ, որ կամենում է, որ մարդու ականջին հաօնեն առածները, բայց այնպէս, որ հազիւ հալսելի լինեն.

—Ի հարկէ, առաջին յարկումը այնպէս քէփ չեն քաշուի ինչպէս վերսումը:

Ահա թէ ինչ էր պատահել.

Ֆրօմօն կրտսերը, երեկոյեան տուն գալուի և տեսնելու թէ ինչպէս ախուր ու այլայլուած է կնոջ դէմքը, իսկոյն հակացաւ, որ դժբախտութիւն է պատահել: Միայն թէ երկու տարուց ի վեր նա այնքան ընտելացել էր իր դաւաճանութեա-

անպատիժ մնալուն, որ ոչ մի բռպէ մաքովը չանցաւ, թէ կինը կարող է իմացած լինել իր արածները, կլէրն էլ չը կամենալով աւելի ևս ծանրացնել նրա դրութիւնը, մեծահոգաբար խօսեց նրա հետ միմիշայն Սավինի գնալու մասին:

—Պատը ոչինչ չը տուեց, —ասաց նա Ժօրժին:

Թշուառականը սարսափելի գունաթափուեց:

«Ես կորայ... կորայ»... զառանցողի նման կրկնեց նա երկու երեք անդամ, և անքուն անցրած գիշերները, այն սարսափելի վերջին տեսակցութիւնը, որ ունեցել էր Սիդոնիի հետ, թոյլ չը տալու համար նրան կազմել այդ պարահանդէսը մնան կութեան նախընթաց երեկոն, և վերջապէս Գարդինուայի մերժումը, այդ բոլոր յուզմունքները, որոնք, իրար հետ կապուած ու իրար յաջորդելով, տակնուվրայ էին արել նրան, արտայայտուեցին ջղային հիւանդութեամբ: Կլէրը խղճահարուեց նրա վրայ, պառկացրեց նրան ու նստեց անկողնի կողքին: Նա փորձում էր խօսել հիւանդի հետ, սիրու տալ նրան, բայց նրա ձայնի մէջ չը կար այլ ևս այն գորովի շեշտը, որ հանգստացնում է և համոզում: Ինչ որ անտարբերութիւն, ինչ որ տարօրինակ անուշագրութիւն էր նկատում նրա շարժումների մէջ, այն ձեր մէջ, որով նա բարձրացնում էր բարձը հիւանդի զիխատակին, որով նա հանգստացուցիչ դեղ էր պատրաստում նրա համար:

—Ա՛խ, աղքատութեան դուռը հասցեցի քեզ, —ժամանակ առ ժամանակ ասում էր նրան Ժօրժը, կարծես ուզելով թօթափել նրա վրայից այդ սառնութիւնը, որ նեղում էր իրան: Կլէրը նրա խօսքերին պատասխանում էր մի գեղեցիկ արհամարհու շարժումով... Երանի թէ միշայն այդ արած լինէր նա իրան:

Սակայն, ի վերջոյ, հիւանդի ջղերը հանգստացան, տաքութիւնը իջաւ ու քունը տարաւ:

Կլէրը մնաց մօտք՝ խնամելու համար:

«Ի՞մ պարտականութիւնս է այդ», ասում էր նա ինքն իրան:

Իր պարտականութիւնը:

Ահա թէ ուր էր հասել նա այժմ այն մարդու վերաբերմք, որին մի ժամանակ այնքան կուրօրէն սիրում էր և որի հետ միասին յոյս ունէր վարել երկարաժես ու երջանիկ կեանք:

Այդ միջոցին պարահանդէսը սկսում էր տաքանալ վերեւում: Առաստաղը գողում էր չափածոյ շարժումով, որովհետեւ պարողների յարմարութեան համար տիկին Ծիսլէրը բոլոր գորգերը վերցնել էր տուել իր դահլիճներից: Երբեմն երբեմն էլ լուռում էր ձայների կցկառուր աղմուկ, յետոյ բազմապատիկ ու

կրկնուող ծափահարութիւն, որից երեսում էր, որ սենեակները լիքն են հիւրերի բազմութեամբ:

Կէրը մտածում էր: Նա իրան չէր տանջում ապարդիւն ափսոսանքներով և լաց ու կոծով: Նա գիտէր, որ կեանքը անողոք է և որ ոչ մի դատողութեամբ չի կարելի կանգնեցնել նրա անխուսափելի ընթացքի տախուր տրամարանութիւնը: Նա չէր աշխատում բացատրել, թէ ինչպէս էր կարողացել այդ մարդը այնքան երկար ժամանակ խարել իրան, ինչպէս էր կարողացել նա մի քմահաճոցքի համար ոտի տակ տալ իր ընտանիքի պատիւը և երջանկութիւնը: Այդ արդէն եղած պրծած բան էր, և իր մտածմունքները չէին կարող չեղած դարձնել այդ փաստը, ուզդել անուղղելին: Նրան զբաղեցնողը ապագան էր: Մի նոր կեանք էր պատկերանում նրա առջև, մոպլ, գաժան և լի զրկանքներով ու չարքաշ աշխատանքով, և, տարօրինակ բան, տնանկութիւնը, փոխանակ սարսափեցնելու նրան, ընդհակառակը վերագարձրեց նրան նրա ամբողջ կորովը: Այն մտածունքը, թէ պէտք էր այսուհետեւ ինայողաբար ապրել և դրա համար՝ փոխել իրանց բնակութեան տեղը, թէ ժօրժը, թերևս և ինքը՝ ստիպուած էին լինելու սաստիկ աշխատել, մի տեսակ եռանդ էր ներշնչում նրա յուսահատ անդորրութեանը: Երեք երեխաների—իր մօր, իր աղջկայ և իր ամուսնու—հոգիների ծանր բեռն էր ունենալու նա իր վզին: Այդ պատասխանաւութեան գիտակցութիւնը թոյլ չէր տալիս նրան շատ խանդաղատուել իր դժբախտութեան վրայ, իր սիրոյ խորտակման վրայ, և որքան նա աւելի էր մոռանում ինքն իրան, մտածելով այն թոյլ էակների մասին, որոնց ինքը հովանաւորելու էր, այնքան լաւ էր հասկանում «զոհողութիւն» խօսքի արժէքը, այդ խօսքի, որ այնքան անորոշ է անտարբեր բերաններում և այլքան լուրջ: Երբ կեանքի ղեկավար կանոն է դառնում:

Ահա թէ ինչի մասին էր մտածում խեղճ կինը այդ տախուր ավնութեան գիշերը, այդ սպառազէն և արտասուակոծ հսկման ժամանակ, երբ նա պատրաստում էր ահեղ կոռու համար: Ահա թէ ինչ բանի վրայ էր լոյս ափուում ներքեւի յարկում Ռիսլէրի նկատած ազօտ լամպը, իբրև մի աստղ, որ վայր էր ընկել պարահանդէսի շողողուն ջահերից:

Քեռի Աշիլլի պատասխանիցը հանգստացած, Ռիսլէրն ուղում էր բարձրանալ իր սենեակը, խուսափելով պարահանդէսից և հիւրերից, որոնցով նա շատ քիչ էր հետաքրքրուում:

Այդպիսի դէպքերում նա բարձրանում էր վերև յետսի սանդուխով, որ հաղորդակցութիւն ունէր գանձապահի գրասենեակի հետ: Այդպիսով նա մտաւ ապակնապատ արհեստանոց-

ները, որոնք՝ ձիւնի անդրադարձրած լուսնաշողքից՝ լուսաւորուած էին ինչպէս օրը ցերեկով, Այդտեղ զգացւում էր գեռ ևս ցերեկուայ աշխատանքի մթնոլորտ, խեղդող տաքութիւն, լի տալկի ու ջնարակի եփուն հոտերով: Ցամքացուցիչների վրայ փըռուած թղթերը երկար խշխացնող շերտեր էին կազմում: Ամեն կողմ թափթփուած էին զանազան գործիքներ և պատերիցը կախ էին տուած վերնաշապիկներ, պատրաստ վաղուան համար: Միշտ ահագին հաճոյք էր զգում Ծիսլէրը այդ տեղով անցնելիս:

Յանկարծ, այդ դատարկ սենեակների երկար շարքի ծայրում նա լոյս նկատեց Պլանիւսի գրասենեակում: Ծերունի: զանձապահը աշխատում էր գեռ ևս զիշերուաց ժամի մէկին: այդ շատ աւարօրինակ բան էր:

Առաջին բոպէին Ծիսլէրը ուզեց յետ դառնալ: Յիրաւի, Ծիսլէրը միզ պատահած սննասկանալի խոռվութիւնից յետոյ, այն օրից ի վեր, երբ Սիդիզմունդը իր ներկայութեամբ միշտ լուս ու մունջ և սառն էր լինում, նա խոռվում էր ծերունի գանձապահի հետ հանդիպելուց: Բարեկամութեան վիրաւորուած զգացմունքը թոյլ չէր տալիս նրան բացարութիւն պահանջել: Ինքնասիրութիւնը արգելք էր լինում հարցնելու Պլանիւսից, թէ ինչու է նա նեղացել իրանից: Սակայն այդ երեկոյ այնպիսի սրտաբաց տրամադրութեան մէջ էր Ծիսլէրը, և, բացի դրանից, այդ այնպիսի յարմար առիթ էր միայնակ ու երես առ երես խօսելու իր հին բարեկամի հետ, որ նա չուզեց այս անդամ խոռվափել հանդիպումից ու արձակ համարձակ ներս մտաւ գրասենեակը:

Գանձապահը այնտեղ անշարժ նստած էր, շրջապատուած թղթերի կոյտերով և հաստ ու յաճախ թերթուած հաշուեզրքերով, որոնցից մի քանիսը թափուել էին գետին: Նա լոկոյ իր պատրօնի ներս մտնելու աղմուկը, բայց նոյն իսկ աչքերը վեր չը բարձրացրեց: Նա ճանաչել էր Ծիսլէրի ոտնաձայնը: Ծիսլէրը սկզբում մի բոպէ տատանման մէջ մնաց, մի քիչ շփոթուած, բայց յետոյ գնաց ուղղակի դէպի դրամարկդի ցանցապատը, շարժուելով այն գաղտնի զսպանակներից մէկի մղումով, որոնք դոյութիւն ունեն մեր մէջ և, ինչ էլ լինի, դուրս են բերում մեզ մեր ճակատագրական ճանապարհի վրայ:

— Սիդիզմունդ... ասաց նա լուրջ ձախով:

Ծերունին բարձրացրեց գլուխը և Ծիսլէրը տեսաւ նրա ծամածուած երեսը, որի վրայով հոսում էին երկու խոշոր կաթիւներ, թերես առաջին արցունքները, որ այդ թուանշանմարդը թափում էր իր կեանքում:

— Լայ ես լինում, ծերուկա... ի՞նչ է պատահել քեզ:

Եւ բարեսիրս Ծիսլէրը, խանդաղատուած, մեկնեց ձեռքը իր բարեկամին, որ, սակայն, թափով յետ քաշեց իր ձեռքը: Այնքան բնագդական, այնքան ուժգին էր այդ յետ քաշելու շարժումը, որ Ծիսլէրի խանդաղատանքը փոխարկուեց զայրոյթի:

Նա շիտկուեց խիստ կերպարանքով:

— Ես ձեռք եմ մեկնում քեզ, Սիգիմոնդ Պլանիւս,— ասաց նա:

— Իսկ ես չեմ ուզում քեզ ձեռք տալ... պատասխանեց Պլանիւսը, տեղից վեր կենալով:

Այնուհետև սարսափելի լոռութիւն տիրեց, որի միջոցին լսում էր վերեկից երածշտութեան խուլ ձայնը և պարահանդէսի աղմուկը, այդ ժանր ու յիմար աղմուկը, որ յառաջացնում է պարերի բաղխումից ցնցուող տախտակամածը:

— Ինչո՞ւ չես ուզում ինձ ձեռք տալ,— հասարակ կերպով հարցրեց Ծիսլէրը, մինչդեռ ցանցապատը, որին կոթնել էր նա, գողում էր մետալային սարսուռով:

Սիգիմոնդը կանգնած էր նրա դիմացը, երկու ձեռքով կոթնած հաշուեսեղանին, կարծես թէ նրա համար, որ աւելի տեղին ու ազդու դուրս գար այն, ինչ որ պատասխանելու էր:

— Ինչո՞ւ... Որովհետև դուք մնանկութեան էք հասցրել առևտրատունը, որովհետև այս բոպէին այնտեղ, ուր դուք կանդնած էք, կը գան բանկից հարիւր հազար ֆրանկ ստանալու, մինչդեռ ես, ձեր չնորհիւ, ոչ մի սու չունեմ դրամարկղի մէջ... Ահա ձեր պատասխանը:

Ծիսլէրը մնացել էր ապշած:

— Ես մնանկութեան եմ հասցրել առևտրատունը, Ես... Ես...

— Աւելի վատ քան այդ, պարոն... Դուք մնանկութեան էք հասցրել այս առևտրատունը ձեր ինոչ միջոցով, իսկ ձեր բանը այնպէս էք սարքել, որ օգտուէք մեր մնանկութիւնից և ձեր խայտառակութիւնից... Օ՛, ես շատ լաւ եմ հասկանում ձեր խաղերը, Այն փողերը, որ ձեր կինը դուրս է քաշել խեղճ ֆրումօնից, Անէրի տունը, ադամանդները և մնացած բոլոր բաները, ի հարիէ, նրա անունով կը լինեն և ազատ կը մնան որ և է վտանգից, այնպէս որ դուք այժմ անշուշտ կարող էք դուրս գալ գործի մէջից:

— Օ՛խ... Օ՛խ... Կմկմում էր Ծիսլէրը հանգած կամ, աւելի ճիշտ, խեղդուած ձայնով, որ անզօր էր արտայատելու այն բոլոր մաքերը, որ նա կ'ուզէր արտայայտել, և այդպէս կմկմալով նա ձգում էր ցանցապատը դէպի ինքը այնքան ուժ-

գին կերպով, որ մի կտոր պոկեց նրանից, և վերջոյ, նա օրօրուեց, տապալուեց գետին և մասյ անշարժ ու պապանձուած, պահպանելով սակայն՝ մէջը մնացած կենդանութեան նշոյիք մէջ հաստատ կամք չը մեռնելու նախ քան ինքն իրան արդարացնելը երեխ շատ զօրեղ էր այդ կամքը, որովհետեւ մինչդեռ քոնքները տրըժարպում էին արիւնից, որ խիել էր գլուխը ու կապտացրել երեաը, մինչդեռ ականջները զրնգզնգում էին և աշքերը կարծես ուղղուել էին արդէն դէպի ահուելի անյայտութիւնը, խեղճը անըմբոնելի ձայնով փոթորկալից ծովում բերանները ջրով լիթը խօսող նաւարեկուածների ձայնով՝ ասում էր ինքն իրան. «Ոէտք է ապրել... պէտք է ապրել...»

Երբ ուշը զրուին եկաւ, նա արդէն նստած էր այն բաղմոցի վրայ, ուր վճարման օրերը նստուած էին լինում բանուորները, վերարկուն գետին ընկած, փողպատը արձակուած, շապկի կուրծքը բացուած, ճեղքուած Սիդիզմունդի գրչահատով։ Իր բախտից՝ ցանցապատը կոտրելիս նա կտրել էր ձեռները. արիւնը շոշուալէն թափուել էր և այդ բանն էր միայն աղատել նրան կաթուածահարութիւնից։ Աշքերը բանալով, նա տեսաւ իր կողքին ծերուանի Սիդիզմունդին և տիկին ժօրժին, որին դնացել կանչել էր վախուորած գանձապահը։ Հէնց որ Ռիսէրը կարողացաւ լեզուն պտոյտ տալ բերանումը, իսկոյն և եթ դիմոց կլէրին չնշանպառ.

— Ճիշտ է այդ, աիլին Շօրշ, ճիշտ է ինչ որ նոր ասացին ինձ,

Կլէրը չը համարձակեց խարեւ նրան և երեսը շուռ տուեց, — Ռիրեմն, — շարունակեց թշուառ մարդը, — ուրեմն առետրատունը կտօք է ընկել և ես եմ...

— Զէ, Ռիսէր, չէ, բարեկամս... Ոչ, դուք չէք...

— Կիսս է, այնպէս չէ... Օ՛խ, սոսկալի բան... Ահա թէ ինչպէս եմ վերադարել ձեզ ձեր երախտիքը... Բայց դուք, տիկին Շօրշ, դուք հօ չէիք կարող ինձ մեղսակից համարել այդ ստորութեան մէջ...

— Զէ, բարեկամս, չէ, հանգստացէք, ինդրեմ... Ես գիտեմ, որ դուք ամենաազնիւ մարդն էք աշխարհումն

Նա մի բոպէ նայեց կլէրին դողդոջուն շրթունքներով և կցուած ձեռքերով, որովհետեւ ինչ որ մանկական բան կար այդ միամիտ բնաւորութեան բոլոր արտայայտութիւնների մէջ։

— Օ՛հ, տիկին Շօրշ... մրմնջաց նա... Երբ որ մտածում եմ, որ ես եմ եղել ձեր մնանկութեան պատճառը...

Իր գլխին եկած սարսափելի դժբախտութեան մէջ, որից գլխաւոր հարուած ստացողը նրա սիրտն էր՝ լի սիրով դէպի

Սիդոնին, նա ուղում էր տեսնել միմիայն Ֆրօմօնների առետրատան հասած դրամական աղետը, որի պատճառը իր կոյր վերաբերմունքն էր եղել դէպի իր կինը: Յանկարծ նա շխտկուեց թափով:

—Գնանք, —ասաց նա, —գգածուելու ժամանակ չէ...

Պէտք է մաքրել մեր հաշիմները...

Տիկին Ֆրօմօնը վախեցաւ:

—Ռիսէր, Ռիսէր... ուր էք գնում:

ինը կինը կարծում էր, թէ նա գնում է Ժօրժի մօտ:

Ռիսէրը հասկացաւ նրա կասկածը և պատասխանեց արհամարհու ու գոռող ժպիտով:

—Ապահով եղէք, տիկին, պ. Ժօրժը կարող է իր համար հանգիստ քննել... Եյժմ ես աւելի անյետաձելի բան ունեմ անելու, քան ամուսնական պատուիս վրիժառութիւնը: Սպասեցէք ինձ այստեղ... իսկոյն կը վերադառնամ:

Նա վազեց դէպի վերե փոքրիկ սանդուխով, և կլէրը վստահ նրա խօսքի վրայ, մնաց մենակ Պլանիւսի հետ, անց կացնելով այն գերագոյն և անորոշ բռպէներից մէկը, որոնք անքան երկար են թւում իրանց ընթացքում արուած անթիւ ենթադրութիւնների չնորհիւ:

Մի քանի վայրկեան անցած՝ նեղ ու մութ սանդուխուը լցուեց շտապ քայլերի ոտնաձայնով և կանացի հագուստի խշխցոցով:

Առաջինը ներս մտաւ Սիդոնին պարահանդիսային զգեստով, չքեզազարդ ու այնքան գունատ, որ նրա վայլատ կաշու վրայ շողացող բազմաթիւ գոհարները աւելի կենդանի էին թւում, քան նա, և կարծես շաղ տուած լինէին մի որ և արձանի սառը մարմարինի երեսին: Պարելու հեքը և յուղմունքի ու արագ քայլուածքի դողը դեռ ևս ցնցում էին նրա ամրող մարմինը, և նրա թեթե ժապաւէնները, զգեստազարդերը, ծաղիկները և աշխարհիկ վարթամ պահուանքը սմբել էին նրա շուրջը տրագիկարաբ: Նրա յետեիցը ներս մտաւ Ռիսէրը ծանրաբենուած տուփերով, արդիկիներով ու արժէթղթերով: Կնոջ սենեակը համնելուն պէս նա յարձակուել էր նրա զարդասեղանի վրայ, ու վերցրել ինչ որ արժէքաւոր բան կար մէջը, գոհարեղին, արժէթղթեր, Անիէրի տան վաճառման թուղթը, և յետոյ սենեակի չէմբիոը բարձրածայն կանչել նրան պարահանդէսից.

—Տիկին Ռիսէր...

Սիդոնին ձեռաց վազել էր նրա մօտ և այդ բոլորը այնքան արագ էր կատարուել ու երեկոյթի այնքան տաք միջոցին, որ ոչ ոք հիւրերից ոչինչ չէր նկատել: Տեսնելով ամուսնուն կանգ-

նած իր սեղանի առաջ, արկղիկները բաց, ջարդուած ու զորգի վրայ թափթփուած՝ մէջները եղած հազար ու մի մանր մունք բաներով, նա իսկոյն հասկացաւ, որ ինչոր սարսափելի բան է տեղի ունենուած:

— Շուտ արէք, եկէք,— ասաց Ռիսլէրը, — ամեն ինչ յայտնի է ինձ:

Սիդօնին ուզեց, ըստ սովորութեան, անմեղ ու հպարտ կերպարանք ընդունել, բայց Ռիսլէրը այնպէս ուժգին բռնեց նրա կռնից, որ նա մտարերեց ֆրանցի խօսքը. «Գուցէ նրան մեռջնի այդ բանը, բայց մեռնելուց առաջ նա ձեզ կը սպանի անշուշտ...» Եւ որպինեաւ նա սաստիկ վախենուամ էր մահից, ուստի թոյլ տուեց քաշ տալ իրան առանց դիմադրութեան, և նոյն իսկ չը համարձակուեց ստել:

— Ո՞ւր ենք գնում,— հարցրեց նա կամաց ձայնով:

Ռիսլէրը պատասխան չը տուեց: Սիդօնին, որ երրէք չէր մոռանում հոգս տանել իր վրայ, հաղիւ ժամանակ ունեցաւ իր մերկ ուսերի վրայ գցելու մի թեթև շղարշէ վղակալ, որովհետեւ Ռիսլէրը իսկոյն քաշ տուեց, աւելի ճիշտ տսած, հրեց նրան դէպի սանդուիր, որով իջաւ նրա հետ միասին, քայլ առ քայլ հետնելով նրան, վախենալով որ որպէս վախսի ձեռքիցը:

— Ահա, ասաց նա ներս մտնելով գանձապահի սենեակլ... Գողացել էինք, այժմ յետ ենք դարձնում... Վերցրու, Պլանիւս, լաւ փող դուրս կը գայ սրանից...

Ու գանձապահի սեղանի վրայ զարսեց այդ ամբողջ գողարիկ կողոպուար, որով լիքն էին բռները, այդ կանացի սեթականքները, կօքէտութեան մանրոյթները և դրոշմաւոր թրղթերը, իսկ յետոյ, գառնալով դէպի լիքնը, հրամայեց.

— Իսկ այժմ, ցնծացէք ձեր գոհարները... Շուտ, շուտ...

Սիդօնին չէր շտապում, ափսոսելով էր բանում ապարանջաններն ու գինդերը և մանաւանդ աղամանդէ վզնոցի հոյակապ ճարմանդը, որի վրայ նրա անուան սկզբնատառը—մի շոշապուն Տ—կարծես քնած օձ լինէր, ոսկէ շրջանակում բանտարկուած: Անհամբեր Ռիսլէրը, տեսնելով, որ բանը շատ է երկարում, սկսեց կոպտաբար ջարգել նուրբ հանգոյցները, և ձոփութիւնը ձում էր նրա մատների տակ, ինչպէս պատժի ենթարկուող յանցաւոր:

— Հիմա իմ հերթն է, ասաց նա այնուհետեւ... ես էլ պէտք է ունեցած չունեցածս տամ... Ահա քսակս... է՞լ ինչ ունեմ... էլ ինչ ունեմ...

Եւ նա վնտոռում, անտղում էր իր վրայ տեսնդօրէն:

— Ախ, հա, ժամացնյցս... Եղթայի հետ հազար ֆրանկ

կ'արժենայ... Այս էլ մատանիներս, այս էլ նշանամատնիքս... Ինչ կայ չը կայ գցէք դրամարկղը: Հարիւր հազար ֆրանկ վը- ճարելիք ունենք այս առաւօտ... Լոյսը բացուելուն պէս պէտք է գործի կազել, ծախել ամեն բան, ոչինչ չը թողնել: Ես գի- տեմ մէկին, որ ուզում է Սնիէրի տունը գնել: Զեռաց կարելի է ծախել:

Միայն նա էր խօսողը, գործողը, Սիգիզմունը և տիկին Ժօրժը լուսումունջ նայում էին նրան: Ինչ վերաբերում է Սի- դօնիին, նա կարծես թմրած, անզգայ լինէր: Սառը օդը, որ պարտէվից ներս էր թափանցում Ռիսլէրի ուշաթափութեան ժամանակից կիսաբաց մնացած դռնովը, սառուացնում էր նրան, և նա, աշքերը սենուն և մաքամոլոր, մեքենայաբար աւելի ու աւելի պինդ էր փաթաթւում իր շղարչէ վզակալի մէջ: Դժուար է ասել լանում էր նա արդեօք իր պարերեկոյթի ջութակների ձայնը, որ լուսութեան բոպէներին, իբր մի անողորմ հեգնութիւն, լուսում էր տախտակամածը դողդողացնող պարերի ծանր աղ- մուկի հետ...

Մի երկաթէ ձեռք յանկարծ աղմեց նրան ու գուրս հա- նեց այդ թմրութիւնից: Ռիսլէրը, բռնելով նրա կոնից ու քաշ տալով իր առեստակցի կոտջ առաջ, հրամայեց.

—Չգիր:

Տիկին Ֆրօնօնը յետ-յետ էր գնում, դիմադրում էր:

—Չէ, չէ, պ. Ռիսլէր, պէտք չէ այդպիսի բան:

—Ոչ, այդ անհրաժեշտ է, ասաց անողոք Ռիսլէրը... Պէտք է ուղղել արածը, պէտք է քաւել... Չգիր, ասում եմ, թշուա- ռական...

Եւ մի անդիմադրելի շարժումով նա չպրտեց Սիդօնիին կլէրի ոտքերը ու, առանց կուոք բաց թողնելու, շարունակեց- Կրիսեցէք իմ յետելից բառ առ բառ այն, ինչ որ ասեմ: «Տիկին...»

Սիդօնին, երկիւղիցը կիսամեռ, կրկնեց թոյլ ձայնով. «Տիկին...»

—Ամբողջ կեանքիս ընթացքում՝ խոնարհ ու հոազանդ մնալով...

—Ամբողջ կեանքիս ընթացքում՝ խոն... Չէ, չէ, չեմ կա- րող... բայցականչեց Սիդօնին և վայրի գաղանի թափով ոսքի կանգնելով ու աղատուելով Ռիսլէրի ձեռքից, դուրս պրծաւ կիսաբաց դռնովը, որ այդ սոսկալի տեսարանի սկզբից ի վեր հրապուրում էր նրան դէպի գիշերային խաւարը ու փախուստի ազատութիւնը, և վազ տալով փախաւ առանց ուշք դարձնելու ձիւնին և սաստիկ քամուն, որ խփում էր նրա մերկ ուսերին:

— Կանգնեցրէք նրան, կանգնեցրէք... Ռիսլէր, Պլանիւս,
ինդրում եմ... ի սէր Աստուծոյ, մի թողէք, որ այդպէս գնայ...
Պլանիւսը մի քայլ արեց դէպի դուռը: Ռիսլէրը կանգնեցրէց նրան.

— Ես պահանջում եմ, որ դու չը շարժուես տեղիցդ: Իսկ
դուք, աֆկին, ինդրեմ ներէք. մենք դրանից շատ աւելի կարեոր
գործեր ունենք կարգադրելու: Այլ ևս այստեղ հարց չը կայ
ափկին Ռիսլէրի մասին... Մենք պէտք է աշխատենք այժմ փըր-
կել Ֆրօմօնների առևտրատան պատիւը, միակ բանը, որ վտան-
գի է ենթարկուած, միակ բանը, որ հետաքրքրում է ինձ այս
բոպէին... Դէպի գրամարկը, Պլանիւս, և զբաղուենք մեր հա-
շիներով:

Սիդիզմունդը պարզեց ձեռքը դէպի նա:

— Դու պատուական մարդ ես, Ռիսլէր: Ներիր քո մասին
տարած կասկածներիս համար:

Ռիսլէրը չը լսած ձեացաւ:

— Պէտք է հարիւր հազար Փրանկ վճարենք, այնպէս չէ...
ի՞նչքան փող կայ զրամարկումդ...

Եւ նա լրջօրէն նստերով ցանցապատի յետեր, սկսեց
թերթել հաշուեգրքերն ու հասոյթաթղթերը և բանալ զուգսե-
ղէնի տուփերն ու գնահատել Պլանիւսի հետ, որի հայրը զոհա-
րավաճառ էր եղել. նրանց մէջի ազամանդները, որ նա մի ժա-
մանակ հիացմունքով դիտում էր իր կողի վրայ առանց իմա-
նալու, թէ ինչ ահագին փող արժեն նրանք:

Կլէրը այդ միջոցին, ամբողջ մարմնով զողալով, պատու-
հանի միջով նայում էր ձիւնից սպիտակած պարտէզին, ուր
Սիդօնիի քայլերի հետքը արդէն ջնջում էր ձիւնի նոր թափ-
ուող փաթիլների տակ, կարծես ապացուցանելու համար, որ
այդ փախուստը անդառնալի էր:

Իսկ վերևում պարում էին դեռ ևս: Հիւրերը կարծում
էին, թէ տանտիրունին ընթրիքի պատրաստութեամբ է զբաղ-
ուած, մինչ նա այդպէս զլխարաց փախչում էր, զսպելով կա-
տաղութեան աղաղակիներն ու հեկեկանքները:

Ուր էր գնում նա:

Նա սենեակից գժի նման դուրս պլրաւ ու վազելով ան-
ցաւ գործարանի պարտէզը, բակերը և մութ կամարները, ո-
րնց տակ յորձանք էր տալիս ողբածայն ու ցրտաշունչ քամին:
Աշիլլ քեռին չը ճանաչեց նրան, որովհետեւ շատ սիլուէտներ
էր տեսել նա այդ գիշեր այդպէս սպիտակ շորերի մէջ կոլորուած
անցնելիս:

Առաջին բոպէին Սիդօնին մտածեց գնալ տէնօր կազա-

բօնիի մօտ, որին վերջ ի վերջոյ չէր համարձակել հրաւիրե պարահանդէսին, բայց նա ապրում էր Մօնմարտր թաղում, և իսկ այդ շատ հեռու էր նրա պէս թեթև հագնուածի համար, և բացի այդ արդեօք տանը կը լինէր նա, իր ծնողները անշուշտ լաւ կ'ընդունէին նրան, բայց նա արդէն առաջուց լուսմ էր արկին Շէրի ախ ու վախերը և հօր անվերջ ճառերը; Այն ժամանակ նրա միաքն ընկաւ իր ծեր Դրլօրէլը, իր փառքի խաւարած բոպէին նա յիշեց այն մարդուն, որ նրա առաջին զեկավարն էր եղել աշխարհիկ կեանքում, որ նրա երեխայութեան միջոցին պարի և վայելչութեան դասեր էր տալիս նրան, ծիծաղում էր նրա գողարիկ շարժուածքները տեսնելով և սովորեցնում էր նրան սիրուն համարել ինքն իրան, երբ գեռ ոչ ոք չէր ասել նրան այդ, Սիդօնիի սիրտը վկայում էր, որ այդ դասալիք մարդը իր կողմը կը լինի, ուստի և նստեց դարպասի մօտ կանդնած կառքերից մէկի մէջ ու հրամայեց տանել իրան Բօմարշէ բուլվարը, Դրլօրէների բնակարանը:

Մի ժամանակից ի վեր տիկին Դրլօրէլը յարդէ գիշարկներ էր շինում արտահանութեան համար,—մի սրտամաշ արհեստ, որ հազիւ հազ երկու ֆրանկ ու կէս եկամուտ էր տալիս նրան տասներկու ժամուայ աշխատանքի համար:

Իսկ Դրլօրէլը շարունակում էր հաստանալ, մինչ իր «սուրբ կինը» նիհարանում էր աւելի ու աւելի: Հէնց այժմ էլ նա պատրաստութիւն էր տեսնում ուտելու կրակարանի մոխրի մէջ տաք պահուած անոնչաբորյ պանրապուրը, երբ յանկարծ ուժգին ծեծեցին նրանց գուոր: Դերասանը, որ հէնց նոր թատրոնում տեսել էր ինչ-որ մի մոպայ, արիւնաշաղախ դրամա, որի պատկերազ յայտարարութիւնն անգամ լի էր արիւնով, ցնցուեց՝ լսելով դռան բախումը այդպէս տարածամ:

—Ով էք, —հարցրեց նա փոքր ինչ ազայլուած:

—Ես եմ... Սիդօնին... Շուտ արէք, բայց էք դուռը:

Նա ներս մտաւ, ամբողջ մարմնով՝ սրսպթալով, և, դէն գցելով զգակալը, մօտեցաւ վասարանին, ուր կրակը հանգչելու վրայ էր: Նա սկսեց անմիջապէս խօսել, գուրս զեղելով՝ սրտի ամբողջ զայտոյթը, որ մի ժամից ի վեր խեղդում էր նրան: Եւ երբ նա այդպէս պատմում էր գործարանում պատահածը, աշխատելով խլացնել ձայնը կողքներին քնած տիկին Դրլօրէլին չը զարթեցնելու համար, նրա չքեղ արդուզարդը հինգերորդ յարկի այդ աղքատիկ ու լերկ սենեակում և նրա ձըմուռած պաճուճանը սպիտակ փայլը այդ իրար վրայ դարսուած կոպիտ յարդէ գլխարկների ու գետնին ցիր ու ցան ցօղունակտորների մէջ՝ յիրաւի այնպիսի տպաւորութիւն էր գործում,

ինչպէս մի դրամա, ինչպէս այն սարսափելի կենսային ցընցումներից մէկը, երբ դասակարգերը, զգացմունքները և կարողութիւնները յանկարծակի տակնուվրայ են լինում ու խառնաշփոթւում իրար հետ:

— Օ՛, ես այլ ես ոտք չեմ դնի մեր տունը... Պրծած բանէ... Այսուհետեւ ես ազատ եմ, ազատ:

— Բայց ով կարող էր մատնել քեզ ամուսնուդ, հարցրեց գերասանը:

— Ֆրանցը: Ես հաստատ հաւատացած եմ, որ ֆրանցն է արել այդ Ռուբիշ ոչ ոքի չէր հաւատալ նա... Հէնց երէկ երեկոյ մի նամակի էր ստացել Եգիպտոսից... Օ՞խ, ինչպէս նա ստորացրեց ինձ այն կնոջ մօտ... Զոքեցրեց նրա առաջ... Բայց ես կը հանեմ վրէժս: Բարեբախտաբար, դուրս գալուց առաջ վերցրի հետո այն բանը, որ ինձ հնարաւորութիւն է տալու հանել վրէժս:

Եւ նրա հինաւուրց ժպիտը գալարուեց նրա գունաթափաթունքների անկիւնում:

Ծերունի գերասանը լսում էր այդ բոլորը ամենամեծ հետաքրքրութեամբ: Չը նայելով իր կարեկցութեանը դէպի խեղճ Ռիտէրը, և նոյն իսկ դէպի Սիդօնին, որ, թատրոնական ոճով ասած, «գեղեցիկ մեղաւորուէի» էր թւում նրան, նա չը կարողացաւ չը վերաբերուել գործին զուտ բեմական տեսակէտից և ի վերջոյ բացականչեց, յափշտակուած իր թատրոնամոլութեամբ.

— Սակայն ինչ հիանալի դրութիւն է հինգերորդ գործութեան համար...

Սիդօնին չը լսեց նրա ասածը: Անձնատուր եղած ինչոր չար մաքերի, որոնք ժպիտ էին բերում նրա երեսին՝ դեռ ևս չիրագործուած, նա մօտեցնում էր կրակին իր ոտները, որոնց թափանցիկ գուլպաները և նուրբ հողաթափները թրջուել էին ձիւնից:

— Հապա ինչ ես անելու այժմ,— հարցրեց Դըլօբէլը մի բուլէ լուռ մնալուց յետոյ:

— Կը մնամ այստեղ մինչև առաւօտ... Մի քիչ կը հանգըստանամ... իսկ յետոյ կը տեսնենք:

— Բայց անկողին չեմ կարող առաջարկել քեզ, իսեղ աղջիկս: Կիսս քնած է...

— Իմ մասին անհանգիստ մի եղէք, սիրելի Դըլօբէլ... Ես բազիաթոռի մէջ էլ կարող եմ քնել: Ես պահանջկոտ չեմ:

Դերասաննը խոր հոգոց քաշեց:

Հոկտեմբեր, 1901.

—Հա, կարելի է բազկաթոռում քնել... և ոչ Զիղիս բազկաթոռն էր այդ: Ո՞րքան գիշերներ տքնել է նու զրա մէջ գործի թունդ ժամանակը... Լաւ որ մտածենք, բախտա որը էլի նրանք են, որոնք չուտ են մեռնում:

Նա միշտ պատրաստ ունէր մի այդպիսի սփոփիչ ու եռամկան սկզբունք: Խօսքը նոր էր վերջացրել, երբ սարսափով նկատեց, որ ապուրը բոլորովին սառելու վրայ էր: Սիրոնին նկատեց նրա շարժումը:

—Կարծեմ, դուք ընթրիք էիք անում... Ինչո՞ւ չէք շարունակում:

—Ճիշտ որ, ինչ արած... այդ մեր արհեստի, մեր տաժանելի կեանքի անբաժան մասն է կազմում... Ինչպէս տեսնում ես, աղջկու, ես գեռ գիմանում եմ: Չեմ հրաժարուել թարոնից: Երբէք չեմ հրաժարուի...

Այս, ինչ մնացել էր Դէղիրէյի հոգուց այդ խղճուկ շրջապատի մէջ, ուր նա ապրել էր քսան տարի, պէտք է անշոշտ սարսուռ զգար այդ սարսափելի խօսքերը լսելիս: Նա չէր հրաժարուի երբէք...

Դըլօբէլը շարունակեց.

—Ինչ ուզում են ասեն, դերասանութիւնից լաւ արհեստ չը կայ աշխարհում: Մարդ բոլորովին ազատ է ու կախում չունի ոչ ոքից: Ամեն ինչ միմիայն փառքի և հասարակութեան համար... Օ, ես զիտեմ, թէ ինչ կ'անէի քո տեղը: Դու այդ բուրժուաների հետ ապրելու համար չէիր ստեղծուած, ես իմ Աստուածը... Քեզ անհրաժեշտ էր արտիստական կեանք, յաջողութեան տեսնդ, անակնկալներ, յուզմունքներ:

Այդ ստելով նա նստեց, կապեց անձեռոցիկը կզակի տակիցը ու լցրեց իր համար մի ահազին ափսէ ապուրից:

—...Էլ չեմ ասում այն, որ սիրունութեանդ յաջողութիւնները ամենեին չէին խանգարիլ գերասանական յաջողութիւններիդ... Մի բան ասեմ: Վաստ չէր լինի, եթէ գէկամացիայի մի քանի դասեր առնէիր... Քո ձայնով, քո խելքով ու ընդունակութիւններով հրաշալի ապագայ կարող էիր ունենալ:

Եւ յանկարծ, կարծես ուզելով մասնակից անել նրան դերասանական արուեստի բերկրանքներին, աւելացրեց.

—Բոլորովին մոռացել էի, որ դու անշոշտ ընթրիք արած չես լինի... Իսկ երբ մարդ յուզմունքներ է կրում, փորը վեցվեց է անում: Նստիր ուրեմն սեղանի մօտ ու վերցրու այս ամանը: Հաւատացած եմ, որ վազուց պանրապուր կերած չես լինի:

Նա տակնուվրայ արևց ամբողջ պահարանը Սիրոնիի հա-

մար անձեռոցիկ ու գդալ գտնելու համար, իսկ Սիդնին նըստեց նրա դիմացը և սկսեց օգնել նրան, մի քիչ ծիծաղելով հիւրասիրութեան դժուարութիւնների վրայ: Արդէն գունատութիւնը մի փոքր անցել էր: Նոյն իսկ մի տեսակ գեղեցիկ փայլ կար նրա աշքերում, չնորհիւ մի փոքր առաջուայ արցունքների և այժմեան ուրախութեան:

Կատարեալ գերասանուհի:

Կեանիքի ամբողջ երջանկութիւնը, պատիւը, ընտանիքը, հարստութիւնը կորցրել էր ընդ միշտ: Արտաքսուել էր տանից, զրկուած ամեն բանից ու խայտառակուած: Մի քիչ առաջ ենթարկուել էր ամեն տեսակ ստորացումների, ամեն տեսակ թշուառութիւնների: Եւ սակայն այդ բոլորը չը խանգարեց նրան ընթրել հրաշալի ախորդակով և ուրախ-զուարթ պատասխանել Դըլօրէլի կատակներին իր կոչման և ապագայ յաջողութիւնների մասին: Նա զգում էր իրան թեթև, երջանիկ և պատրաստ մտնելու բօհեմական աշխարհը, իր համար ստեղծուած աշխարհը: Ի՞նչ էր պատահելու այսուհետև նրան: Ի՞նչ յաջողութիւններ ու ձախորդութիւններ էր տեսնելու նա իր նոր, անսպասելի ու քմահած կեանքում: Այդ մաքերն էին զբաղեցնում նրան Դէգիրէլի մեծ բազկաթոռում քուն մտնելու ժամանակ, բայց նա մտածում էր նաև իր վրիժառութեան մասին, իր բաղցը վրիժառութեան մասին, որի զէնքը, անվիշտ ու դաժան զէնքը՝ նա պատրաստ ունէր ձեռքի տակ:

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը շարունակուի)